



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահական Խորհուրդ

Presidential Council of the Republic of Western Armenia

Նախագահական Հրամանագիր
Թիւ 45 - 2017-12-02

Օրենսդրական Ընտրութիւններու 2018 վերաբերեալ

Հանրապետութեան Նախագահը

Հաշուի առնելով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 92-րդ յօդուածը՝ եւ ընտրական օրենսգիրքը,

Ազգային Ժողովի (Խորհրդարան) հերթական ընտրութիւններ

Յօդուած 92.

Ազգային Ժողովի հերթական ընտրութիւնը տեղի կ'ունենայ անոր լիազօրութիւններու աւարտին նախորդող ոչ շուտ, քան վաթսուն, եւ ոչ ուշ, քան երեսուն օր առաջ:

Ազգային Ժողովի արտահերթ ընտրութիւնը տեղի կ'ունենայ Ազգային Ժողովը արձակելէ ետք ոչ շուտ, քան վաթսուն, եւ ոչ ուշ, քան երեսուն օրուայ ընթացքին:

Ազգային Ժողովի ընտրութիւնը կը նշանակուի Հանրապետութեան Նախագահի հրամանագիրով:

Կը հրամանագրէ հետեւեալը,

Յօդուած 1. - Հաշուի առնելով ողջ ընտրական օրացույցը, թեկնածուներու նախնական ցանկը ուժի մէջ կը մտնէ **2018 թուականի Փետրուարի 1-ին:**

Յօդուած 2. - Հաշուի առնելով ողջ ընտրական օրացույցը, թեկնածուներու ցանկը կը փակուի **2018 թուականի Հոկտեմբերի 22-ին:**

Յօդուած 3. - Հաշուի առնելով ողջ ընտրական օրացույցը, օրենսդրական ընտրութիւնները կ'անցկացուին **2018 թ. Նոյեմբերի 22- էն մինչեւ Նոյեմբերի 30-ը:**

Յօդուած 4. - Հաշուի առնելով ողջ ընտրական օրացույցը, օրենսդրական ընտրութիւններու արդիւնքները կը ներկայացուին Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Կեդրոնական Ընտրական

Յանձնաժողովի կողմէն 2018 թուականի Դեկտեմբերի 8-ին եւ կը հրապարակուին Ներքին Գործերու Նախարարութեան կողմէն, Նախագահի հրամանով:

Հանրապետութեան Նախագահը

Հաշուի առնելով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 93-րդ յօդուածը՝ եւ ընտրական օրենսգիրքը,

Յօդուած 93.

Նորընտիր Ազգային Ժողովի առաջին նստաշրջանը կը գումարուի պատգամաւորներու ընտրութենէն եւ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի ընտրութիւններու արդիւնքները հրապարակելէ ոչ ուշ, քան տասնհինգ օր յետոյ:

Արտահերթ ընտրութեան պարագաներուն նորընտիր Ազգային Ժողովի առաջին նստաշրջանը կը գումարուի պատգամաւորներու ընտրութենէն եւ Կեդրոնական ընտրական յանձնաժողովի ընտրութիւններու արդիւնքները հրապարակելէ ոչ ուշ, քան երեսուն օր յետոյ:

Կեդրոնական ընտրական յանձնաժողովը պարտաւոր է ընտրութիւններու արդիւնքները հրապարակել ոչ ուշ, քան տասը օր յետոյ:

Կը հրամանագրէ հետեւեալը,

Յօդուած 1. - Հաշուի առնելով ողջ ընտրական օրացույցը եւ օրենսդրական ընտրութիւններու հրապարակուած արդիւնքները՝ նորընտիր Ազգային Ժողովի երկրորդ գումարման առաջին նստաշրջանը տեղի կունենայ **2019 թուականի Յունուարի 18-ին մինչեւ 20-ը:**

Յօդուած 2. - Նորընտիր Ազգային Ժողովի առաջին նստաշրջանի վայրը կը որոշուի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի կողմէն նստաշրջանէն **ոչ ուշ, քան երեք ամիս առաջ:**

Հանրապետութեան Նախագահը

Հաշուի առնելով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան Հանրապետութեան Նախագահի ընտրութեան վերաբերեալ 70-րդ յօդուածը, 71-րդ յօդուածը եւ 72-րդ յօդուածը.

Կը հրամանագրէ հետեւեալը,

Յօդուած 1. - Նորընտիր Ազգային Ժողովի երկրորդ գումարման առաջին նստաշրջանի ժամանակ, Ազգային ժողովի կողմէն կ'ընտրուի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նոր Նախագահը, հինգ տարուան ժամկետով:

Կարին, 02 Դեկտեմբեր 2017թ.

Արմենակ Աբրահամեան
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ